

հաւտաս, Զրիստոս, որ երկու բնութիւն ունի, մի՞ կամք ունի, թե՞ երկու»: Ես շփոթած այս անակնունելի հարցմունքին վրայ, պատասխանեցի թէ «Այսպիսի խնդիրներ կ'արողութենես վեր եմ, ինչ որ եկեղեցին որոշէ՝ այն կընդունիմ»: Բայց մտքես ցաւեցայ, որ այդ մարդը, որ մենք դիւցազն մը տեսեր էինք պատերազմի դաշտին վրայ, այդ զառամութեան էր հասեր: Երեւակայէ՛, եղբայր, որ թոռը հիմա այդ աստուածաբանական խնդրոյն վրայ հաւատոյ դաւանութիւն մը կը հրատարակէ, եւ Մաքսիմոս պատրիարքը, վասնզի դեմ գրեր եւ քարոզէր է այդ դաւանութեան ու հերետիկոսական անուաներ է, աստուծոյ քահանային լեզուն եւ աջը կտրել տուեր էր:

— Այսչա՞փ միայն:

— Ո՛չ, դեռ կայ, մէկ հատիկ եղբայրը՝ Թեոդոս, սարկաւագ ձեռնադրել տուեր է, նորա ձեռքէն հաղորդուէր է եւ դարձեալ գոհ չլինելով՝ սպաննել տուեր է:

— Ուրի՞շ:

— Բանտերը լցնել տուեր է այն մարդիկներով, որոց վրայ հաւատոյ կամ իւր անձին դեմ կասկած ունեցեր է:

— Դեռ ուրի՞շ:

— Եղբայր, քեզի էլ բռնաւոր հաւնեցնել յիրաւի շատ դժուար է: Այսչափը բաւական չէ՞:

— Ո՛չ այդպէս, շատ կը սխալիս, ես բռնաւորի կը հաւնիմ, բայց ոչ այդպիսի յիմար բռնաւորներու, որ ոչ նպատակ ունին եւ ոչ գիտեն, որ ի՞նչ կ'ուզեն եւ ո՞ւր կ'երթան: Ես իմ ուզած բռնաւորս եթէ գտնէի...

— Բռնաւորին լաւը չի կայ, Ռշտունի, ես կը զարմանամ թէ ինչ դիպուածով իմ գլուխս ուներուս վրայ մնացեր է եօթանասունհինգ տարի. ուր իմ կայսր տեսեր եմ, որոց առաջին երկուքը՝ ամենէն լաւերը՝ չեմ կրնար դատել, իսկ Մորիկէ սկսած մինչեւ այս Կոստանդ ամենն էլ արիւնկալ բռնաւոր: Ի՞նչ օգուտ ունեցեր են աշխարհիքի եւ իրենց անձանց ու ընտանեաց: Իսկ թէ հայ ազգը ի՞նչ է քաշեր սոցայ օրով եւ թէ ի՞նչ քաջ նախարարք եւ իշխանք զոհ գնացեր են այսչափ միջոցի մէջ, եթէ մէկիկ-մէկիկ համրեմ...

— Մի՛ համրեր, անօգուտ է, ես լաւ գիտեմ: Թէ որ կարենայի զքեզ մեր Ոստանը տանիլ, կրնայի ցցնել այս վերջի հարիւր տարուան միջոցին հայոց քիւրաւորաց